



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«___» _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37410) 521 877, ֆաքս՝ (37410) 529 753

№ _____

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,
տարածքային կառավարման նախարար
պարոն Ա. Գևորգյանին

Հարգելի պարոն Գևորգյան

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը կից ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ով պահանջվող տեղեկանքները:

Խնդրում եմ ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի N ՆՀ-174-Ն հրամանագրի 43-րդ կետով սահմանված ժամկետում նախագծի վերաբերյալ Ձեր առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝

Ա.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (ՀՕ-185) 61-րդ հոդվածում՝

1) վերնագիրը և առաջին պարբերությունը «հողամասերի» բառից հետո լրացնել (այդ թվում՝ կառուցապատված) մասնավորեցումն ու» բառերով.

2) 1-ին կետը «համայնքների ղեկավարները» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական լիազորված մարմնի կողմից հաշվառված պետական սեփականություն հանդիսացող կառուցապատված հողամասերի.» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ՝

«4) կառուցապատված հողամասերի (այդ թվում՝ կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքում առանձնացված՝ չկառուցապատված՝ հողամասերի) օտարման դեպքում՝ կառավարության լիազորած պետական մարմինը՝ սույն օրենսգրքով և օտարման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում առաջարկվող լրացումները պայմանավորված են պետական սեփականություն համարվող հողամասերի մասնավորեցման և օտարման բնագավառում լիազորված մարմնի գործառույթների հստակեցման անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի վերնագիրը վերաբերում է պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարմանը, իսկ նույն հոդվածի 3-րդ կետը վերաբերում է միայն մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքերին: ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի N 26 որոշմամբ վերապահված լիազորությունները նույնպես վերաբերում են միայն մասնավորեցման գործարքներին:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի ընդունումից հետո 2002 թվականի հունվարի 14-ին ընդունված Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 26 որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը լիազորություններ են վերապահվել իրավաբանական անձանց մասնավորեցման դեպքում պետության սեփականություն համարվող հողամասերի օտարման մասով: Ինչ վերաբերում է պետական սեփականություն հանդիսացող շենք, շինությունների սպասարկման և օգտագործման համար հատկացված և օպտիմալացման արդյունքում առանձնացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարմանը, ապա այդ հարաբերությունների կարգավորման համար ՀՀ կառավարության նշված որոշմամբ լիազորություններ վերապահված չեն և ոչ մի մարմնի:

Միևնույն ժամանակ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից, հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքում և ՀՀ

քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները, շենք, շինությունների օտարման դեպքում օտարվում են նաև դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված հողամասերը: Առկա են դեպքեր, երբ շենք, շինության սպասարկման և օգտագործման համար հատկացված հողամասերի չափերը գերազանցում են դրանց սպասարկման և օգտագործման անհրաժեշտ սահմանները և արդյունավետ կառավարման տեսանկյունից նպատակահարմար է դրանք առանձնացնել և օտարել որպես առանձին միավորներ:

Այդպիսի գործարքները բազմաթիվ են, բազմաթիվ են նաև գործարքներ, երբ մասնավորեցվող ընկերությունների զբաղեցրած հողամասերի օպտիմալացման անհրաժեշտություն է առաջանում (գնորդը ցանկություն չի հայտնում մասնավորեցվող գույքի հետ ձեռք բերել հողամասի մի մասը), իսկ այդ ճանապարհով առանձնացված հողամասերի օտարման կամ մասնավորեցման լիազորություններ վերապահված չեն:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Նախատեսվում է սահմանել պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների սպասարկման և օգտագործման համար հատկացված, պետական ընկերությունների մասնավորեցման, ինչպես նաև օպտիմալացման արդյունքում առանձնացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործում լիազորված մարմինը:

Կարգավորման նպատակը և բնույթը

Իրավական ակտի նպատակն է՝ տնտեսական շրջանառության մեջ դնել պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների սպասարկման և օգտագործման համար հատկացված, պետական ընկերությունների մասնավորեցման, ինչպես նաև օպտիմալացման արդյունքում առանձնացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կկանոնակարգվեն պետական սեփականություն հանդիսացող կառուցապատված հողամասերի օտարման բվագավառում առաջացող իրավահարաբերությունները: Նախագծի ընդունման դեպքում հնարավորություն կընձեռնվի լրացուցիչ դրամական մուտքեր ապահովել ՀՀ պետական բյուջեում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում, կանխատեսվում է, որ կավելանան պետական բյուջեի եկամուտները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք	
1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	Օրենքի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան լրացում կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 26 որոշման մեջ:
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին և չի առաջացնում նոր պարտավորություններ:
3	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	Չկան:

Տեղեկանք հասարակության մասնակցության մասին	
1	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը տեղադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ինտերնետային պաշտոնական կայքում՝ www.spm.am -ում:
2	Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
	Հանրության մասնակցության անհրաժեշտություն չի առաջացել:
3	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	Չկան:

